

ամրոցի մօտ, որտեղ գտնվում էր Զալալ ալ Դինը [ուղղելի՝ Զալալ Դօլան - Ա. Յ.]՝ Իււանէ ալ Գուրջիի քրոջորդին: Շարաֆ ալ Մուլքն սկսեց սպառնալ ու սարսափեցնել նրան, մինչեւ որ հաշտութեան մասին համաձայնութեան եկաւ՝ այն պայմանով, որ իրեն կը վճարեն 10 հազար դինար բերբերի եւ ազատ կ'արձակեն նախկինում ու վերջերս գերուած 700 մահմեդականներին»<sup>71</sup>: «Խաչէն... միջնադարեան ամրոցի» համար թարգմանիչը եւս ծանօթագրում է. «Ճիշտը՝ Խօխանաբերդ»<sup>72</sup>:

Ան Նասալիի նման՝ Խաչէն «նահանգի» ամուր բերդի յիշատակութիւն է պահպանուել նաեւ Ժ. Գ. առաջին կէսի մի պարսկալեզու անանուն հեղինակի «Աշխարհի զարմանալիքները» վերտառութեամբ աշխարհագրական երկում (Ն. Միկլուխո-Մակլայը դրա ստեղծման առաւել հնարաւոր ժամանակը համարում է 1220-ական թթ. կէսերը<sup>73</sup>): Բառարանի ձեւով կազմուած այդ սկզբնաղբերի՝ մեր կողմից օգտագործուած ուսերէն թարգմանութեան բնագրում արաբերէն «խա» տառի տակ շարադրուած է նաեւ, ըստ ամենայնի, «Խաչէն» բառայօդուածը, թէպէտ պահպա-

նուած միակ ձեռագրում վերնագիր-բառի տեղը բաց է թողած), որում ասուում է. «Այդ նահանգը [վիլայաթ] դժուարամատչելի է, լեռների եւ անտառների մէջ. պատկանում է Առուանի մարզերին [ա'մալ]. այնտեղ հայեր են [ապրում]. Աբխազի [իւնա՝ Վիրք] մարդիկ նրանց փաղիշահին տագաւեր [իւնա՝ թագաւոր] են անուանում. նրանք աբխազների հետ խռովութիւններ են անում: Նրանք ամուր բերդ ունեն: Իսլամի տիրակալ-փաղիշահը՝ յաղթանակող աշխարհիկ եւ հոգեւոր գործերում, 611 թ. [Հիջրէի = 1214/1215 թթ.] արշաւեց ձորի [դարէ] միջնամասը. նրա զօրքերը յաղթանակ տարան եւ համատարած կոտորած արեցին»<sup>74</sup>: Բերուած շարադրանքի բովում «Խաչէն նահանգի» «ամուր բերդի» մասին նշելու եւ միաժամանակ անունը չտալու հանգամանքը որոշ հաւանականութեամբ թոյլ է տալիս մտածել, թէ պատճառը, գուցէ, երկու աշխարհագրական միաւորների նոյնանունութիւնն է եղել: Թէպէտ բացառուած չէ եւ մի ուրիշ տարբերակ: Պարսիկ անանունի երկում Խաչէնի վրայ Ատրպատականի սելջուկ արքայի (Ն. Միկլուխո-Մակլայը ծանօթագրում է, որ դա, հաւանաբար, եղել է Էլտկուգեան Մուզաֆար աղ-դին Ուզբեկը) 1214/1215 թ. արշաւան-

71 Жизнеописание султана Джалал ад-Дина Манкбурны, Пер. с арабского, предисловие, комментарии, примечания и указатели **З. М. Буниятова**, Баку, 1973, էջ 211: Շարունակութիւնն է. «Դրանց մէջ կային եւ այնպիսիք, որ գերեզարուել էին մանուկ հասակում, իսկ գերութիւնից ազատուեցին արդէն ծերունի» (էջ 211-212):

72 Նոյն տեղում, էջ 388: Ծանօթագրութեան մէջ թարգմանիչը շարունակում է նաեւ. «Կիրակոս Գանձակեցի. «Ամրոցը, որ պարսկերէն կոչում էր Խօխանաբերդ («Տիրակալի քարէ բնակարան»): Վերջին «թարգմանութիւնը» լիովին անհասկանալի է (այս առիթով խորհրդատւութեան համար երախտագիտութիւնն եմ յայտնում նաեւ իրանագետ Արմանուշ Կոզմոյեանին):

73 **Н. Д. Миклухо-Маклай**, *Географическое сочинение XIII в. на персидском языке (Новый источник по исторической географии Азербайджана и Армении)*, - "УЗ Института Востоковедения", т. IX, Москва-Ленинград, 1954, էջ 184-185 (վերնագրի եւ հեղինակի մասին տե՛ս էջ 177-184):

74 Նոյն տեղում, էջ 204-205. *Аджаиб ад-дунья (Чудеса мира)*. Критический текст, перевод с персидского, введение, комментарии и указатели **Л. П. Смирновой**, Москва, 1993, էջ 199: Շարունակութիւնն է. «Արանք ստրուկներ ու հարուստ ուզմաւր բերեցին եւ հրի մատնեցին այն բազմատուածների տներն ու բնակավայրերը. [այդպէս] դրսեւորուեց [փաղիշահի] ողջ վեհութիւնը: Այդ վայրի ապրանքներն եւ՝ հաճելի գինիները, բուրաւէտ խնձորները, խաղողը եւ քաղցր մուրը»: Բնագրի՝ «այնտեղ հայեր են [ապրում]» արտայայտութեան փոխարէն (Ս. Պետերբուրգի Արեւելագիտութեան ինստիտուտի ձեռ. А-253, թ. 202թ. «արմանի անդ») առաջին ուսերէն թարգմանութեան՝ «այնտեղ հայեր կան» սխալի մասին տե՛ս **П. М. Мурадян**, *История - память поколений. Проблемы истории Нагорного Карабаха*, Ер., 1990, էջ 87: